ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/93

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Ջետտա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10291-2019 գրությամբ «Ջետտա» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.06.2019թ. թիվ ՊՆ/02/877-2019 գրության հիման վրա, 19.06.2019թ. «Ջետտա» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.06.2019թ. թիվ ՊՆ/02/877-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար «Գրասենյակային գույքի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 14 մասնակիցներ, այդ թվում՝ «Ջեփտա» ՍՊԸ-ն, որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ:

«Ջեփտա» ՍՊԸ-ն (կոնսորցիում «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ) գնահատող հանձնաժողովի կողմից 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ «Ջեփտա» ՍՊԸ-ն (կոնսորցիում «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 29.05.2019թ. կայացած նիստում որոշեց մեկ աշխատանքային օրով

կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում չշտկեց արձանագրված անհամապատասխանությունները, (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի պահանջները, որոշել է մերժել «Ջետտա» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ) հայտը:»:

3. <u>«Ջետտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.06.2019թ.-ին գրությամբ դիմել է Մասնակցին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10291-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

«Ջետտա» ՍՊԸ-ն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Ջետտա» ՍՊԸ և «Արմֆարմ» ՍՊԸ կոնսորցիումը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՃԱՊՁԲ-10/22» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին և ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 4-րդ չափաբաժնի համար ներկայացրել է որակավորման փաստաթղթերը:

Մրցույթի հրավերով սահմանվել է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 1-9 չափաբաժինների մասով գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի, իսկ 10-րդ չափաբաժնի մասով՝ գնման առարկա հանդիսացող և /կամ/ էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և /կամ/ կենցաղային սարքավորումների մատակարարված լինելը: Սակայն մեր կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը պատվիրատուն անհիմն կարգով որակել է հրավերին ոչ համապատասխան:

Պատվիրատուի կողմից որպես մերժման պատճառ է նշվել (Արձանագրություն N 5, կցվում է), որ ներկայացված հաշիվ ապրանքագրերում նշված գրասենյակային գույքը իր

կոնկրետ ձևաչափով, իր կոնկրետ նշածով չի համապատասխանում, փոխկապակցված չի գնման առարկա հանդիսացող «Արշավի մահճակալներին» «չափորոշիչները փոխկապակցված չեն գնման առարկայի հետ»:

Սակայն պատվիրատուն իր հրավերում չի նշել գրասենյակային գույք, որը իր առանձնահատկություններով պայմանավորված պետք է փոխկապակցված լինի գնման առարկայի հետ:

Եթե պատվիրատուն հրավերով չի նշել նման փոխկապակցվածության մասին, ապա ինչու՞ է պահանջում:

Մեր կողմից հաշիվ ապրանքագրերով (կցվում է) ներկայացված ապրանքները համարվում են գրասենյակային գույք, անկախ նրանից կա որևէ փոխկապակցվածություն, թե փոխկապակցված չեն, քանի որ հրավերով չկա նման պայման:

Ստորև բերված է «Գույք» բառի նշանակություն բացատրական բառարանից

***գույք** - բացատրություն գույքի, [գոյական]*

1. Շարժական և անշարժ ունեցվածք:

2. Հիմնարկության՝ ձեռնարկության՝ տնտեսության և ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը, ինվենտար:

3. Իր, առարկա, բան:

4. Կահավորանքի առարկաներ, կահկարասի:

Ինչպես երևում է բացատրական բառարանից, «գույք» նշանակում է ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը, ինվենտար, իր, առարկա, բան:

Հետևաբար «գրասենյակային գույք» նշանակում է ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը, ինվենտար, իր, առարկա, բան, որը օգտագործվում է գրասենյակում:

Մեր կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերում ներկայացված ապրանքները հանդիսանում են ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը, ինվենտար, իր, առարկա, բան:

Ուստի պատվիրատուի կողմից ներկայացված պատճառաբանությունները անհիմն են:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Ջետտա» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից «Գրասենյակային գույքի» ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Ջետտա» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 23.04.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «Ջետտա» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

15.05.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը ուղարկվել է ծանուցում:

Հանձնաժողովի 29.05.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Ներկայացված ապրանքների մատակարարման հարկային հաշիվներում նշված չեն պայմանագրերի համարները, ինչը հանձնաժողովին հնարավորություն չի տալիս պարզելու արդյո՞ք տվյալ հաշիվ-ապրանքագրերը կազմվել են ներկայացված պայմանագրերի շրջանակներում կատարված մատակարարումների հիման վրա:

Քանի որ որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 29.01.2019թ. կնքված ՈԱԱ-4/2019 և ՈԱԳ-2/2019 պայմանագրերում գնման առարկաները նշված են ընդհանուր ձևով, իսկ կոնկրետ մատակարարված ապրանքատեսակները ներկայացված են հաշիվ-ապրանքագրերում (եթե ընդունենք, որ դրանք կազմվել են նշված պայմանագրերի շրջանակներում), ուստի մատակարարված ապրանքների նմանատիպությունը գնահատելիս գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել հաշիվ-ապրանքագրերում նշված ապրանքների անվանումները, որոնք իրենցից ներկայացնում են միայն գրասենյակային նյութեր, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար, որպես նմանատիպ են սահմանվել գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի մատակարարման պայմանագրերը», այնինչ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից, որպես նմանատիպ ներկայացվել է «Գրասենյակային նյութեր» մատակարարման պայմանագիր:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում են ապրանքի չափերի վերաբերյալ տվյալները, որոնք սահմանված էին ընթացակարգի հրավերով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

29.05.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը ուղարկվել է ծանուցում:

Հանձնաժողովի 07.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից 29.05.2019թ արձանագրված անհամապատասխանությունները

շտկելու առաջարկին ի պատասխան՝ ընկերության տնօրենի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին Մասնակիցը ներկայացրել է գրություն, համաձայն որի՝ հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին «Ջետտա» ՍՊԸ-ի համապատասխանությունն հավաստող և իր կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար են և դրանք շտկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գնահատող հանձնաժողովը, քննարկելով մասնակցի գրությունը և կրկնակի ուսումնասիրելով «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է «Ջետտա» ՍՊԸ-ի ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին իր համապատասխանությունն հավաստող որակավորման փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10291-2019 գրությամբ «Ջետտա» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած

մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Հրավերի 2.5 կետի համաձայն.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 1-9 չափաբաժինների մասով գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի, իսկ 10-րդ չափաբաժնի մասով՝ գնման առարկա հանդիսացող և /կամ/ էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և /կամ/ կենցաղային սարքավորումների մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,
2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,
3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Գրասենյակային գույքի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ջետտա» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/ ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովի 29.05.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Ներկայացված ապրանքների մատակարարման հարկային հաշիվներում նշված չեն պայմանագրերի համարները, ինչը հանձնաժողովին հնարավորություն չի տալիս պարզելու արդյո՞ք տվյալ հաշիվ-ապրանքագրերը կազմվել են ներկայացված պայմանագրերի շրջանակներում կատարված մատակարարումների հիման վրա:

Քանի որ որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 29.01.2019թ. կնքված ՆԱԱ-4/2019 և

ՈԱԳ-2/2019 պայմանագրերում գնման առարկաները նշված են ընդհանուր ձևով, իսկ կոնկրետ մատակարարված ապրանքատեսակները ներկայացված են հաշիվ-ապրանքագրերում (եթե ընդունենք, որ դրանք կազմվել են նշված պայմանագրերի շրջանակներում), ուստի մատակարարված ապրանքների նմանատիպությունը գնահատելիս գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել հաշիվ-ապրանքագրերում նշված ապրանքների անվանումները, որոնք իրենցից ներկայացնում են միայն գրասենյակային նյութեր, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար, որպես նմանատիպ են սահմանվել գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի մատակարարման պայմանագրերը», այնինչ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից, որպես նմանատիպ ներկայացվել է «Գրասենյակային նյութեր» մատակարարման պայմանագիր:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում են ապրանքի չափերի վերաբերյալ տվյալները, որոնք սահմանված էին ընթացակարգի հրավերով:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Վերը նշված շտկման վերաբերյալ առաջարկին ի պատասխան՝ ընկերության տնօրենի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին է ներկայացվել գրություն, որով Մասնակիցը պնդում է իր դիրքորոշումն առ այն, որ հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին «Ջետտա» ՍՊԸ-ի համապատասխանությունն հավաստող և իր կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար են և դրանք շտկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գնահատող հանձնաժողովը, քննարկելով մասնակցի գրությունը և կրկնակի ուսումնասիրելով «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին

իր համապատասխանությունն հավաստող որակավորման փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Հանձնաժողովը վերը նշվածը պատճառաբանել է, այն հիմնավորմամբ, որ ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար, որպես նմանատիպ են սահմանվել գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի մատակարարման պայմանագրերը», այնինչ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից, որպես նմանատիպ ներկայացվել են «Գրասենյակային նյութերի» մատակարարման պայմանագրեր, ընդ որում պայմանագրերի նմանատիպության հարցը քննարկելիս հանձնաժողովն առաջնորդվել է ոչ թե ներկայացված պայմանագրերի (29.01.2019թ. կնքված N ԱԱ-4/2019 և N ԱԳ-2/2019) վերնագրերով կամ դրանց մեջ առկա ընդհանուր բնորոշումներով, այլ հաշիվ-ապրանքագրերում նշված կոնկրետ ապրանքների անվանումներով, այսինքն՝ տեխնիկական բնութագրերի առանձնահատկություններով պայմանավորված, չափորոշիչները փոխկապակցված չեն գնման առարկայի հետ:

Անդրադառնալով Մասնակցի այն պնդմանը, որ նմանատիպ համարվող պայմանագրերի հաշիվ ապրանքագրերով ներկայացված ապրանքները համարվում են գրասենյակային գույք, քանի որ ինչպես նշված է բացատրական բառարանում, «գույք» նշանակում է ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը, ինվենտար, իր, առարկա, բան, հետևաբար «գրասենյակային գույք» նշանակում է ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը, ինվենտար, իր, առարկա, բան, որը օգտագործվում է գրասենյակում, իսկ Մասնակցի կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերում էլ ներկայացված ապրանքները հանդիսանում են ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը, ինվենտար, իր, առարկա, բան, ապա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Հրավերի 2.5 կետի համաձայն հստակ նշվել է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 1-9 չափաբաժինների մասով գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի մատակարարված լինելը:

Ընթացակարգի 4-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցը՝ հաղթող/ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում պետք է մատակարարեր «արշավի մահճակալներ (մահճակալ ծալովի, դաշտային)»:

Վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից ներկայացված նմանատիպ համարվող պայմանագրերի հաշիվ ապրանքագրերով

մատակարարված «օժանդակ գրասենյակային նյութեր-պարագաներ» (թուղթ, տպագրական կտրոններ, ջնջիչ, դակիչ, գրիչ գելային և այլն) ապրանքները համադրելով գնման առարկայի հետ, ակնհայտ է, որ դրանք ոչ մի կերպ չեն կարող ընթացակարգի իմաստով համարվել նմանատիպ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ տվյալ մասնակցի հայտը պետք է մերժվի, մասնակիցն էլ ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ջետտա» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով նախկինում պատշաճ կատարված նմանատիպ

պայմանագիր, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն դեպքում, հաշվի առնելով, որ ընկերությունները հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), ուստի մասնակիցները պետք է կրեն համատեղ և համապարտ պատասխանատվություն, հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10291-2019 գրությամբ «Ջետտա» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ջետտա» ՍՊԸ-ին և «Արմֆարմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**